# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2025 թվականի N 76-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 30-ի ութերորդ նստաշրջանի չորրորդ հերթական նիստի օրակարգը՝
   1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի բնակիչներին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից շինություններ կառուցելու համաձայնություն տալու մասին.
   2) Համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների (հողամասերի) սահմաններին կից Մարտունի համայնքի բնակիչների կողմից իրենց հողամասերում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացմանը համաձայնություն տալու մասին.
   3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրում գտնվող 05-039-0023-0016 կադաստրային ծածկագրով 0.118 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին.
   4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրի 1-ին փողոց, թիվ 70 հասցեում գտնվող 05-062-0040-0004 կադաստրային ծածկագրով 0.02 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և նրա վրա կառուցված եկեղեցին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու համաձայնություն տալու մասին.
   5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի 3-րդ թաղամասի հրապարակ 13/1 հողամաս հասցեում

գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-052-0003-0065 կադաստրային ծածկագրով 0.01045 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

6) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 95.0 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

7) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 2.21 հա, 2.16 հա և 3.072 հա մակերեսներով արոտավայրերը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

8) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի և Երանոս բնակավայրի վարչական տարածքներում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա գտնվող բարդի տեսակի ծառերը հատելու համաձայնություն տալու մասին.

9) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 11-ի №160-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

10) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի №260-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

11) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունի համայնքի թիվ 1 կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.

12) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունի համայնքի թիվ 2 կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.

13) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդաձոր բնակավայրի մշակույթի տանը գտնվող 36.0 քառակուսի մետր մակերեսով թիվ 14 տարածքն անհատույց օգտագործման իրավունքով «Մեր ապագան» կրթամշակութային բարեգործական հիմնադրամին տրամադրելու մասին.

14) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին.

15) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հինգերորդ հերթական նիստի օրը սահմանելու մասին.

16) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 1-ին փողոց, թիվ 16/2 հասցեում գտնվող 05-045-0010-0229 կադաստրային ծածկագրով 0.1466 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելուն համաձայնություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎԵՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025 թ. մայիսի 30

ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2025 թվականի N 77-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԻ (ՀՈՂԱՄԱՍԻ) ՍԱՀՄԱՆԻՆ ԿԻՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի №04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 133-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝
   1) Հովհաննես Գագիկի Հովհաննեսյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից իր՝ Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոց, թիվ 77 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել ավտոտնակ.
   2) Անահիտ Դանիելի Սարգսյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից իր՝ Մարտունի քաղաքի Վ. Մամիկոնյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 14 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել ամառային խոհանոց.
   3) Սուրեն Սամվելի Ավետիսյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից իր՝ Մարտունի քաղաքի Երևանյան փողոց, թիվ 55 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի 1-ին հարկում գտնվող թիվ 11 բնակարանին կից կառուցել կցակառույց.
   4) Գրիգոր Խնդրիչի Գրիգորյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից իր՝ Վաղաշեն բնակավայրի 25-րդ փողոց, թիվ 11 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել հացատուն-

ավտոտնակ.

5) Լևոն Աշոտի Հակոբյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին մոտ իր՝ Ներքին Գետաշեն բնակավայրի Դարեր թաղամասի 2-րդ փողոց, թիվ 3 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել բնակելի տուն.

6) Ռուբիկ Արամայիսի Սահակյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին մոտ իր՝ Ներքին Գետաշեն բնակավայրի Վանքի թաղամասի 1-ին փողոց, թիվ 11 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել բնակելի տուն.

7) Անահիտ Սերյոժայի Եղոյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից իր՝ Վարդենիկ բնակավայրի 10-րդ փողոց, թիվ 45 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում գոյություն ունեցող նկուղի վրա կառուցել բնակելի տուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎԵՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ

2025 թ. մայիսի 30
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2025 թվականի N 78-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ) ՍԱՀՄԱՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի №04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 128-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝

   1) Ալբերտ Գառնիկի Հարությունյանի կողմից Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Գետափնյա 2-րդ փողոց, թիվ 50 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

   2) Նելսոն Վարդկեսի Սարգսյանի կողմից Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Կամոյի փողոց, թիվ 30 հասցեում գտնվող իր հասարակական կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին մոտ ինքնակամ կառուցած խանութն օրինականացնելու համար.

   3) Արտակ Ջիվանի Բունությանի կողմից Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դուրան թաղամասի 8-րդ փողոց, թիվ 50 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

   4) Մացիչ Վիլգենի Գեղամյանի կողմից Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի Ա-6 թաղամասի 8-րդ փողոց, թիվ 2 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին մոտ ինքնակամ կառուցած բնակելի տունն օրինականացնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎԵՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. մայիսի 30
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2025 թվականի N 79-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-039-0023-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.118 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի №1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 13-ի №2/փ-146 դրական եզրակացությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրում գտնվող «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդիսացող 05-039-0023-0016 կադաստրային ծածկագրով 0.118 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կապի հողեր գործառնական նշանակությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՀՈՎՅԱՆ**

2025 թ. մայիսի 30
ք. Մարտունի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2025 թվականի N 80-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱԴԻՆԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 70 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-062-0040-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.02 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ (ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1.2 մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրի 1-ին փողոց, թիվ 70 հասցեում գտնվող 05-062-0040-0004 կադաստրային ծածկագրով 0.02 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը (նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ պատմական և մշակութային) և նրա վրա կառուցված 70.76 քմ մակերեսով եկեղեցին սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ

2025 թ. մայիսի 30
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2025 թվականի N 81-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԻՆԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ՀՐԱՊԱՐԱԿ 13/1 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-052-0003-0065 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.01045 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1 և 76-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի №286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետը, նկատի ունենալով, որ 05-003-0769-0002 կադաստրային ծածկագրով հողամասն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի 3-րդ թաղամասի հրապարակ 13/1 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-052-0003-0065 կադաստրային ծածկագրով 0.01045 հա մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ ընդհանուր օգտագործման) 99 տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել կառուցապատման իրավունքով:
2. Կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 200 (երկու հարյուր) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -2

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎԵՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. մայիսի 30
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2025 թվականի N 82-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 95.0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգ սահմանելու մասին» N1477-Ն որոշումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 95.0 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության իրավունքով:
2. Հողամասի վարձակալության տարեկան վարձավճարի չափը սահմանել 130000 (հարյուր երեսուն հազար) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎԵՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025 թ. մայիսի 30
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

30 մայիսի 2025 թվականի    N 83-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 2.21 ՀԱ, 2.16 ՀԱ ԵՎ 3.072 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» №16-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ՝

   1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող 05-027-2102-0015 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 2.21 հա մակերեսով արոտավայրը 10 տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով՝ հողամասի տարեկան վարձավճարը սահմանելով 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ.
   2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող 05-027-2102-0014 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 2.16 հա մակերեսով արոտավայրը 10 տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով՝ հողամասի տարեկան վարձավճարը սահմանելով 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող 05-027-2102-0013 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 3.072 հա մակերեսով արոտավայրը 10 տարի ժամկետով մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով՝ հողամասի տարեկան վարձավճարը սահմանելով 10000 (տասը հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -3

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎԵՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025 թ. մայիսի 30
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2025 թվականի N 84-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԵՐԱՆՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲԱՐԴԻ ՏԵՍԱԿԻ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի 2025 թվականի մարտի 18-ի №133 և 2025 թվականի մայիսի 15-ի №156 եզրակացությունները՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ հատել՝
   1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Հարություն Հարությունյան 3/1 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող 10 (տասը) բարդի տեսակի ծառերը, որոնք վտանգ են ներկայացնում մոտակա տնակներին և այլ շինություններին.
   2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս բնակավայրի վարչական տարածքում գտնվող, թիվ 2 միջնակարգ դպրոցի սեփականություն հանդիսացող հողամասում առկա 15 (տասնհինգ) բարդի տեսակի ծառերը, որոնք խոչընդոտում են այնտեղ կատարվող շինարարական աշխատանքների հետագա ընթացքին: Պարտավորեցնել շինարարական կազմակերպությանը աշխատանքներն ավարտելուց անմիջապես հետո կատարել ծառատունկ շուրջ 50 (հիսուն) նոր ծառատեսակներով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -1 Ձեռնպահ -3

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎԵՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025 թ. մայիսի 30

ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2025 թվականի N 85-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի №160-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների կազմերը հաստատելու մասին» №160-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «Հարությունյան Սվետլանա» բառերը փոխարինել «Խաչատրյան Կարեն» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎԵՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025 թ. մայիսի 30
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2025 թվականի N 86-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի №260-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» №193-Ա որոշմամբ հաստատված հավելված №24-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎԵՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025 թ. մայիսի 30
ք. Մարտունի

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի
ավագանու 2025 թվականի մայիսի 30-ի №86-Ա
որոշման
«Հավելված №24
ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի
ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի №193-Ա
որոշման

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՎԱՐԴԵՆԻԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 37
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ / մեկ միավորի համար, ՀՀ դրամ/ | Աշխատավարձ / ՀՀ դրամ/ | Բարձր լեռնային հավելավճար / ՀՀ դրամ/ | Ընդամենը | Աշխատողների քանակը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 207000 | 207000 | 8000 | 215000 | 1 |
| 2 | Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղակալ | 1 | 130000 | 130000 | 8000 | 138000 | 1 |
| 3 | Բուժքույր | 1 | 115000 | 115000 | 8000 | 123000 | 1 |
| 4 | Հաշվապահ | 1 | 135000 | 135000 | 8000 | 143000 | 1 |
| 5 | Տնտեսվար | 0,75 | 125000 | 93750 | 6000 | 99750 | 1 |
| 6 | Խոհարար | 1 | 140000 | 140000 | 8000 | 148000 | 1 |
| 7 | Խոհարարի օգնական | 1 | 115000 | 115000 | 8000 | 123000 | 2 |
| 8 | Օժանդակ բանվոր | 0,5 | 105000 | 52500 | 4000 | 56500 | 1 |
| 9 | Դերձակ | 0,25 | 110000 | 27500 | 2000 | 29500 | 1 |
| 10 | Լվացարար | 0,5 | 110000 | 55000 | 4000 | 59000 | 1 |
| 11 | Հնոցապան | 1 | 110000 | 110000 | 8000 | 118000 | 1 |
| 12 | Դռնապահ | 1 | 120000 | 120000 | 8000 | 128000 | 1 |
| 13 | Հավաքարար | 1 | 110000 | 110000 | 8000 | 118000 | 1 |
| 14 | Դաստիարակ | 5,6 | 150000 | 840000 | 40000 | 880000 | 10 |
| 15 | Դաստիարակի օգնական | 5 | 115000 | 575000 | 40000 | 615000 | 10 |
| 16 | Ֆիզհրահանգիչ | 1,25 | 125000 | 156250 | 8000 | 164250 | 1 |
| 17 | Երաժշտության դաստիարակ | 1,25 | 125000 | 156250 | 8000 | 164250 | 1 |
| 18 | Հարուկ մանկավարժ | 0,5 | 125000 | 62500 | 4000 | 66500 | 1 |
| | Ընդամենը | 24,6 | 2272000 | 3200750 | 188000 | 3388750 | 37 |

»:

Աշխատակազմի քարտուղար Ս. Հովհաննիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2025 թվականի    N  87-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունի համայնքի թիվ 1 կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -18    Դեմ -0    Ձեռնպահ -1

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎԵՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ՀՈՎԵՅԱՆ

2025 թ. մայիսի 30
ք. Մարտունի

Կազմված է «____» _____________2025 թ.
Բաղկացած է _____ էջից:
Տպագրված է ընդամենը —— օրինակ:
Օրինակ N__

*Գրանցված է՝*
Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում
Գրանցման N _________________
ՀՎՀՀ _______________
«____» __________20___ թվականին

*Հաստատված է՝*
ՀՀ Գեղարքունիքի մարզի
Մարտունի համայնքի ավագանու
2025 թվականի մայիսի 30-ի N 87 -Ա
որոշմամբ:
Համայնքի ղեկավար

_____________ Հ. Հովեյան

գրանցված կանոնադրության թիվ __ փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից՝

«____» ____________2025 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**(Նոր խմբագրություն)**

2025 թվական

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունի համայնքի թիվ 1 կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) համարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն: Կազմակերպությունը հանդիսանում է «Մարտունու քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (գրանցման համար՝ 76.215.56665) իրավահաջորդը:

Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքն է (այսուհետ՝ Հիմնադիր), որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարը:

Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 24-ի թիվ 117-Ա որոշման համաձայն:

1.2 Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցման) պահից:

1.3 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը և իր անվանումը (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլնշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:

1.4 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5 Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

1.6 Հայաստանի Հանրապետությունը և Մարտունի համայնքը պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորությունների համար: Կազմակերպությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության համայնքների պարտավորությունների համար:

1.7 Կազմակերպության անվանումն է՝ հայերեն լրիվ «Մարտունու համայնքի թիվ 1 կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, կրճատ՝ «Մարտունու համայնքի թիվ 1 կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ:

1.8 Կազմակերպության գտնվելու վայրը, փոստային հասցեն է՝ 1401, ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի Շահումյան 2-րդ փողոց:

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կազմակերպության նպատակն է ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմաններ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս, Վարդաձոր, Ձորագյուղ, Ծովասար, Ծակքար, Լիճք, Ն. Գետաշեն, Վ. Գետաշեն, Գեղհովիտ, Լեռնակերտ, Մադինա բնակավայրերի և Մարտունի քաղաքի բնակչության կենսաապահովմանն ուղղված ծառայությունների սպասարկմանը, բնակավայրի տարածքի բարեկարգ ու մաքուր վիճակի պահպանմանը, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական ու կոմունալ խնդիրներին առնչվող հասարակական ընդհանուր միջոցառումների կազմակերպման համար:

2.2 Կազմակերպությունը գործում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

2.3 Կազմակերպությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

2.4 Կազմակերպությունն իր գործունեությունը իրականացնում է հիմնադրի կողմից հաստատված ծախսերի նախահաշվին համապատասխան, որը կազմվում է յուրաքանչյուր տարվա համար և հաստատվում է ավագանու կողմից:

2.5 Հաստատված նախահաշիվը տարվա ընթացքում կարող է փոփոխվել միայն հիմնադրի կողմից՝ ավագանու հաստատմամբ:

2.6 Կազմակերպությունն իր վրա դրված խնդիրները լուծում է հիմնադրի կողմից և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում:

2.7 Կազմակերպությունն իր գործունեությունը կարող է իրականացնել միայն հիմնադրի որոշմամբ նախատեսված հետևյալ գործունեության բնագավառներում.

1) Ջրամատակարարում

- խմելու ջրամատակարարման համակարգի կառույցների շահագործում պահպանում, արդիականացում և ջրահեռացում,
- խմելու ջրամատակարարման համակարգի գլխամասային կառույցների շահագործման և սպասարկման աշխատանքներ (սանիտարական

պահպանման գոտիների, գլխամասային կառույցների հերմետիկության, պահակային ծառայության, լուսավորության ապահովում),

- խմելու ջրամատակարարման համակարգում վթարավերականգնողական աշխատանքների իրականացում,
- խմելու ջրի որակի արտադրական հսկողության իրականացում,
- խմելու ջրի մանրէազերծման (քլորացման) աշխատանքների իրականացում,
- խմելու ջրի նպատակային օգտագործման և հսկողության աշխատանքների կատարում, վարձավճարների գանձում:

2) Շրջակա միջավայրի պաշտպանություն

- կանաչապատման, բարեկարգման,
- սանմաքրման աշխատանքներ,
- աղբահանում և վարձավճարների գանձում,
- կեղտաջրերի հեռացում,
- շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար և հսկողություն:

3) Ճանապարհային տրանսպորտ

- ներհամայնքային ճանապարհների ձյան մաքրում,
- ներհամայնքային ճանապարհների ընթացիկ նորոգում,
- դաշտամիջյան ճանապարհների ընթացիկ նորոգում,

4) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)

- հուղարկավորությունների կազմակերպում՝ գերեզմանատեղերի տրամադրում և հաշվառում, գերեզմանատների պահպանում և շահագործում,
- գերեզմանատների ցանկապատի ընթացիկ նորոգում և ցանկապատի կառուցում,

5) Ոռոգում

- համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ներքին և արտաքին առուների ընթացիկ նորոգում և պահպանում,

6) Փողոցների լուսավորության ցանցի ընթացիկ նորոգում

7) Կոմունալ բնույթի այլ ծառայությունների մատուցում:

2.8 Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

2.9 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած ֆինանսական ազատ միջոցները օգտագործվում են նրա կանոնադրությամբ նախատեսված

նպատակների իրականացման համար: Ֆինանսական ազատ միջոցների օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

- Կանաչապատման, բարեկարգման, աղբահանության և սանմաքրման աշխատանքների,
- Աբոնենտային վճարների գանձման կազմակերպում,
- Ծախառող շների ստերջացման գործընթացի ապահովում,
- Լուսավորության ցանցի պահպանում և շահագործում:

2.3 Իր առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացման համար Կազմակերպությունը՝

- Իր կողմից կնքված պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի ու բազմակողմանի կապեր հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների, հիմնադրամների, այլ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ,
- Պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ կազմակերպություններ կամ անհատներ,
- Կատարում է տարատեսակ աշխատանքներ կադրերի պատրաստման, մասնագետների փոխանակման, մշակութային-լուսավորչական և այլ բնագավառներում,
- Իրականացնում է հրատարակչական գործունեություն:

2.4 Կազմակերպությունը կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրամի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության տեսակներ:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Կազմակերպությունը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Կազմակերպությունը լիցենզիայի գործունեության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի շուրջ:

## 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պետական գրանցման պահից Կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ

գույքով , կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային, և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցոր կամ պատասխանող:

Կազմակերպությունն իրավունք ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա բանկերում՝ հաշվարկային բանկային հաշիվներ (ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ տարադրամով):

3.2 Կազմակերպությունը կարող է լինել այլ կազմակերպության հիմնադիր (մասնակից) միայն հիմնադիր որոշմամբ:

3.3 Կազմակերպությունն իրավունք ունի ստեղծել (հիմնադրի որոշմամբ) առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Կազմակերպությունը կարող է ստեղծել հիմնարկներ (հիմնադրի որոշմամբ):

Օտարերկրյա պետություններում առանձնացված ստորաբաժանումների ստեղծումն իրականացվում է տվյալ երկրի օրենքներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Կազմակերպության լիազորագրերի հիման վրա:

3.4 Կազմակերպությունն իրավունք ունի.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,
- Ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,
- Հիմնադրի որոշումների կամ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, մեկ տարուց ոչ ավելի ժամկետով իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնել վարձակալության,
- Օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու կամ գրավատու,

- Օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձ և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիներ համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իր իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ,
- Օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.5 Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, կամ հանձնել վարձակալությամբ:

3.6 Կազմակերպությունը պարտավոր է.

- Օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն,
- Աշխատանքային պայմանագրեր կնքել Կազմակերպության աշխատակիցների հետ,
- Պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը կնքած պայմանագրերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,
- Աղբահանության վարձը ՀՀ օրենսդրության համապատասխան չգանձելու համար,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել կազմակերպության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը,
- Ապահովել Կազմակերպության փաստաթղթերի (Կազմակերպության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Կազմակերպության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, տնօրենի հրամանների, հրահանգների ու կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերովնախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,
- Կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

## 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

4.1 Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4.2 Կազմակերպության հիմնադիրն իրավունք ունի.

- Հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը (այդ թվում՝ գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները),
- Կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել Կազմակերպության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները, կնքած պայմանագրերը,
- Վերահսկողություն իրականացնել Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ,
- Հայցով դիմել դատարան՝ Օրենքի կամ սույն կանոնադրության պահանջների խախտմամբ կատարած խոշոր գործարքը անվավեր ճանաչելու նպատակով, օգտվել Օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

4.3 Կազմակերպության հիմնադիրը պարտավոր է՝

- Պահպանել Կազմակերպության բնականոն գործունեությունը,
- Չհրապարակել Կազմակերպության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ,
- Կատարել Կազմակերպության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,
- Պահպանել սույն կանոնադրության դրույթները:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԸ

5.1 Կազմակերպությունը հանդիսանում է սեփականատեր՝

- Կազմակերպության հիմնադրի կողմից (հիմնադրման ժամանակ և հետագայում) սեփականության իրավունքով հանձնված գույքի,
- Կազմակերպության գործունեության հետևանքով արտադրած արտադրանքի և ձեռք բերած գույքի,

- Կազմակերպության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց,
- Կազմակերպության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը կազմակերպության սեփականության պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում է միայն օրենքով:

5.2 Կազմակերպության հիմնադիրը Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ:

5.3 Կազմակերպության հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

5.4 Կազմակերպության գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

5.5 Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար սահմանված կարգով ու չափով հարկերը, և պարտադիր այլ վճարները կատարելուց հետո մնացած, սահմանված կարգով առաջացած մաքուր շահույթը Կազմակերպությունն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների (կազմակերպության տեխնիկական հագեցվածության բարելավում, այդ թվում՝ հիմնական միջոցների ձեռքբերման ճանապարհով, Կազմակերպության աշխատանքային գործունեությունը ապահովող գույքի և նյութերի ձեռքբերում, գրականության ձեռքբերում, բրոշյուրների, գրքույկների, տեղեկագրերի հրապարակման կազմակերպում, պարգևատրումների, հավելավճարների և խրախուսման այլ միջոցներով Կազմակերպության աշխատակիցների սոցիալական պաշտպանվածության բարձրացում, աշխատակիցների որակավորման բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպում կամ մասնակցություն կազմակերպված դասընթացներին և այլն) իրականացման համար:

Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

## 6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6.1 Կազմակերպության կառավարման մարմիններն են Կազմակերպության հիմնադիրը և տնօրենը:

6.2 Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը Կազմակերպության հիմնադիրն է, որն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը և որն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելուիրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Կազմակերպության հիմնադիրն ապահովում է Կազմակերպության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է սույն կանոնադրությամբ սահմանված գործունեության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման իրականացման համար:

6.3 Կազմակերպության հիմնադրի իրավասությանն են պատկանում.

1) Կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Կազմակերպության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
2) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմի հաստատումը,
3) Կազմակերպությանն ամրացվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կազմի հաստատումը,
4) Կազմակերպության վերակազմակերպումը
5) Կազմակերպության լուծարումը
6) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների (լուծարման ամփոփիչ, լուծարման միջանկյալ և լուծարման հաշվեկշիռներ) հաստատումը,
7) Կազմակերպությունների հիմնադրումը,
8) Կազմակերպություններում մասնակցությունների մասին որոշումների ընդունումը,
9) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը, Կազակերպության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
10) Կազմակերպության գործունեության վերահսկողության իրականացումը,
11) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ Կազմակերպության կողմից իրականացվող գործունեության տեսակների և ծրագրերի սահմանումը,
12) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
13) Աուդիտի իրականացման որոշումն ընդունելը,
14) Կազմակերպության տարեկան ծախսերի, այդ թվում՝ արտաբյուջետային եկամուտների և ծախսերի նախահաշվի, հաստիքացուցակների հաստատումը,
15) Կազմակերպության տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը,
16) Կազմակերպության շահույթի ու վնասների օգտագործման կարգի մասին որոշման ընդունումը,

17) Կազմակերպության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը,

18) Կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ (որոնց արժեքը, գործարքին փոխկապակակցված այլ գործարքների հետ միասին, գերազանցում է այդ գործարքների կատարելու մասին որոշման ընդունման օրվանը նախորդող եռամսյակի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների մեծության Զ-ը) կատարելուն համաձայնություն տալը,

19) Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,

20) Կազմակերպության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (Կազմակերպության ներքին փաստաթղթեր) հաստատումը,

21) Ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը, Կազմակերպության Հիմնադիրն իրավունք ունի որոշումներ ընդունել նաև Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված ցանկացած այլ հարցի շուրջ:

6.4 Կազմակերպության ընթացիկ, արտադրատնտեսական, ֆինանսական և այլ գործունեության ղեկավարումը իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է Հիմնադիրը, երեք տարի ժամկետով: Մրցութային կարգով կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող, Հայաստանի Հանրապետության գործունակ ցանկացած քաղաքացի, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի: Կազմակերպության և Կազմակերպության տնօրենի միջև աշխատանքային պայմանագիրը հիմնադրի անունից ստորագրվում է համայնքի ղեկավարի կողմից: Պայմանագրում սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, փոխհարաբերությունները Հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման հիմքերը (այդ թվում` Օրենքով նախատեսված բոլոր հիմքերը), այլ դրույթներ, որոնք կողմերը կգտնեն անհրաժեշտ:

Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Կազմակերպության Հիմնադրի իրավասության վերաբերվող հարցերի: Տնօրենը օրենքով, Հիմնադրի որոշումներով, աշխատանքային պայմանագրով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության, աշխատանքային պայմանագրի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը, Հիմնադրին, պետությանը պատճառված վնասի համար, ընդ որում տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու:

Հիմնադրի անունից հանդես եկող պաշտոնատար անձը (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարը) պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել վերը նշված վնասի փոխհատուցման հարցը, հակառակ դեպքում՝ նա կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

Տնօրենի բացակայության դեպքում, Հիմնադրի գրավոր որոշման համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

6.5 Կազմակերպության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Կազմակերպության:

Կազմակերպության տնօրենը իր իրավասության սահմաններում՝

1) Առանց լիազորագրի գործում է կազմակերպությունների անունից, ներկայացնում է նրա շահերը պետության, նրա մարմինների, այլ կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում,

2) Տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

3) Կնքում է պայմանագիր, այդ թվում է՝ աշխատանքային,

4) Կազմակերպում է կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը,

5) Տալիս է լիազորագիր, այդ թվում՝ վերալիցենզավորման իրավունքով լիազորագիր,

6) Բանկում բացվում է հաշվարկային և այլ հաշիվներ,

7) Սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային տարաբաժանումների իրավասությունները,

8) Հաստատում է կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունը, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին, տալիս է համապատասխան լիազորագրեր.

9) Ներկայացնում է հաստիքացուցակը հիմնադրի հաստատմանը,

10) Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

11) Կատարում է աշխատանքի բաշխում իր աշխատողների միջև,

12) Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին,

13) Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

14) Սույն կանոնադրության 6.3 կետի 1,4, 8, 11, 14, 16, 17, 19, 21 ենթակետերով սահմանված հարցերի մասին առաջարկություններ է ներկայացնում Հիմնադրին,

15) Իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված կամ հիմնադրի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ:

6.6 Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հիմնադրի կողմից լիազորված անձը, օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար Հիմնադիրն իրավունք ունի ամեն տարի ներգրավել Կազմակերպության, Կազմակերպության տնօրենի, գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչի՝ աուդիտորի (արտաքին աուդիտ):

## 7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ ԵՎ ԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Կազմակերպությունը չունի ճյուղեր և ներկայացուցչություններ:

## 8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1 Կազմակերպությունը, նրա Հիմնադիրի որոշմամբ, կարող է կամովի վերակազմակերպվել կամ լուծարվել Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Կազմակերպությունը կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Եթե լուծարվող Կազմակերպության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հիմքով:

8.2 Կազմակերպությունն իրավունք ունի վերակազմավորվել հարյուր տոկոս համայնքային (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք) մասնակցությամբ կամ հիմնադրամի:

8.3 Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի բյուջե:

8.4 Կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը դադարած՝ այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2025 թվականի N 88-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունի համայնքի թիվ 2 կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -18 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎԵՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. մայիսի 30
ք. Մարտունի

Կազմված է «____» ____________2025 թ.
Բաղկացած է _____ էջից:
Տպագրված է ընդամենը —— օրինակ:
Օրինակ N__

Գրանցված է՝
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրում
Գրանցման N _______________
ՀՎՀՀ _______________
«____» __________20___ թվականին

Հաստատված է՝
ՀՀ Գեղարքունիքի մարզի
Մարտունի համայնքի ավագանու
2025 թվականի մայիսի 30-ի N 88 -Ա
որոշմամբ:
Համայնքի ղեկավար
_____________ Հ. Հովեյան

գրանցված կանոնադրության թիվ __
փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից՝

«____» ____________2025 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրություն)

2025 թվական

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու «Մարտունու համայնքի թիվ 2 կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) համարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն: Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքն է (այսուհետ՝ Հիմնադիր), որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարը:

Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 24-ի թիվ 118-Ա որոշման համաձայն:

1.2 Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցման) պահից:

1.3 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը և իր անվանումը (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:

1.4 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5 Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

1.6 Հայաստանի Հանրապետությունը և Մարտունի համայնքը պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորությունների

համար: Կազմակերպությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության համայնքների պարտավորությունների համար:

1.7 Կազմակերպության անվանումն է՝ հայերեն լրիվ «Մարտունու համայնքի թիվ 2 կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, կրճատ՝ «Մարտունու համայնքի թիվ 2 կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ:

1.8 Կազմակերպության գտնվելու վայրը, փոստային հասցեն է՝ 1401, ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վարդենիկ բնակավայր, Կամո Շահինյան 83:

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կազմակերպության նպատակն է ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմաններ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ, Ծովինար, Վարդենիկ, Ձոլաքար, Աստղաձոր, Վաղաշեն բնակավայրերի բնակչության կենսաապահովմանն ուղղված ծառայությունների սպասարկման, բնակավայրի տարածքի բարեկարգ ու մաքուր վիճակի պահպանման, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական ու կոմունալ խնդիրներին առնչվող հասարակական ընդհանուր միջոցառումների կազմակերպման համար:

2.2 Կազմակերպությունը գործում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

2.3 Կազմակերպությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

2.4 Կազմակերպությունն իր գործունեությունը իրականացնում է հիմնադրի կողմից հաստատված ծախսերի նախահաշվին համապատասխան, որը կազմվում է յուրաքանչյուր տարվա համար և հաստատվում է ավագանու կողմից:

2.5 Հաստատված նախահաշիվը տարվա ընթացքում կարող է փոփոխվել միայն հիմնադրի կողմից՝ ավագանու հաստատմամբ:

2.6 Կազմակերպությունն իր վրա դրված խնդիրները լուծում է հիմնադրի կողմից և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում:

2.7 Կազմակերպությունն իր գործունեությունը կարող է իրականացնել միայն հիմնադրի որոշմամբ նախատեսված հետևյալ գործունեության բնագավառներում.

1) Ջրամատակարարում

- խմելու ջրամատակարարման համակարգի կառույցների շահագործում պահպանում, արդիականացում և ջրահեռացում,
- խմելու ջրի արտադրական հսկողության իրականացում,
- խմելու ջրի մանրէազերծման (քլորացման) աշխատանքների իրականացում,
- խմելու ջրամատակարարման համակարգի գլխամասային կառույցների սպասարկման աշխատանքներ (հերմետիկության, պահակային ծառայության, լուսավորության ապահովում),
- խմելու ջրի նպատակային օգտագործման և հսկողության աշխատանքների կատարում, վարձավճարների գանձում:

2) Շրջակա միջավայրի պաշտպանություն

- կանաչապատման, բարեկարգման,
- սանմաքրման աշխատանքներ,
- աղբահանում և վարձավճարների գանձում,
- կեղտաջրերի հեռացում,
- շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար և հսկողություն:

3) Ճանապարհային տրանսպորտ

- ներհամայնքային ճանապարհների ձյան մաքրում,
- ներհամայնքային ճանապարհների ընթացիկ նորոգում,
- դաշտամիջյան ճանապարհների ընթացիկ նորոգում,

4) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)

- հուղարկավորությունների կազմակերպում՝ գերեզմանատեղերի տրամադրում և հաշվառում, գերեզմանատների պահպանում և շահագործում,
- գերեզմանատների ցանկապատի ընթացիկ նորոգում և ցանկապատի կառուցում,

5) Ոռոգում

- համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ներքին և արտաքին առուների ընթացիկ նորոգում և պահպանում,

6) Փողոցների լուսավորության ցանցի ընթացիկ նորոգում

7) Կոմունալ բնույթի այլ ծառայությունների մատուցում:

2.8 Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

2.9 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած ֆինանսական ազատ միջոցները օգտագործվում են նրա կանոնադրությամբ նախատեսված

նպատակների իրականացման համար: Ֆինանսական ազատ միջոցների օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

- Կանաչապատման, բարեկարգման, աղբահանության և սանմաքրման աշխատանքների,
- Աբոնետային վճարների գանձման կազմակերպում,
- Թափառող շների ստերջացման գործընթացի ապահովում,
- Լուսավորության ցանցի պահպանում և շահագործում:

2.10 Իր առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացման համար Կազմակերպությունը՝

- Իր կողմից կնքված պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի ու բազմակողմանի կապեր հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների, հիմնադրամների, այլ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ,
- Պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ կազմակերպություններ կամ անհատներ,
- Կատարում է տարատեսակ աշխատանքներ կադրերի պատրաստման, մասնագետների փոխանակման, մշակութային-լուսավորչական և այլ բնագավառներում,
- Իրականացնում է հրատարակչական գործունեություն:

2.11 Կազմակերպությունը կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրամի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության տեսակներ:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Կազմակերպությունը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Կազմակերպությունը լիցենզիայի գործունեության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի շուրջ:

## 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պետական գրանցման պահից Կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով , կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային, և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցոր կամ պատասխանող:

Կազմակերպությունն իրավունք ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա բամկերում՝ հաշվարկային բանկային հաշիվներ (ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ տարադրամով):

3.2 Կազմակերպությունը կարող է լինել այլ կազմակերպության հիմնադիր (մասնակից) միայն հիմնադիր որոշմամբ:

3.3 Կազմակերպությունն իրավունք ունի ստեղծել (հիմնադրի որոշմամբ) առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Կազմակերպությունը կարող է ստեղծել հիմնարկներ (հիմնադրի որոշմամբ):

Օտարերկրյա պետություններում առանձնացված ստորաբաժանումների ստեղծումն իրականացվում է տվյալ երկրի օրենքներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Կազմակերպության լիազորագրերի հիման վրա:

3.4 Կազմակերպությունն իրավունք ունի.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,
- Ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,

- Հիմնադրի որոշումների կամ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, մեկ տարուց ոչ ավելի ժամկետով իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնել վարձակալության,
- Օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու կամ գրավատու,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձ և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիներ համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իր իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկությունների,
- Օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.5 Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, կամ հանձնել վարձակալությամբ:

3.6 Կազմակերպությունը պարտավոր է.

- Օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն,
- Աշխատանքային պայմանագրեր կնքել Կազմակերպության աշխատակիցների հետ,
- Պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը կնքած պայմանագրերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,
- Աղբահանության վարձը ՀՀ օրենսդրության համապատասխան չգանձելու համար,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել կազմակերպության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը,
- Ապահովել Կազմակերպության փաստաթղթերի (Կազմակերպության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող

փաստաթղթերի, Կազմակերպության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, տնօրենի հրամանների, հրահանգների ու կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերովնախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,

- Կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

## 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

4.1 Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4.2 Կազմակերպության հիմնադիրն իրավունք ունի.

- Հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը (այդ թվում՝ գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները),
- Կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել Կազմակերպության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները, կնքած պայմանագրերը,
- Վերահսկողություն իրականացնել Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ,
- Հայցով դիմել դատարան՝ Օրենքի կամ սույն կանոնադրության պահանջների խախտմամբ կատարած խոշոր գործարքը անվավեր ճանաչելու նպատակով, օգտվել Օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

4.3 Կազմակերպության հիմնադիրը պարտավոր է՝

- Պահպանել Կազմակերպության բնականոն գործունեությունը,
- Չհրապարակել Կազմակերպության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ,
- Կատարել Կազմակերպության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,
- Պահպանել սույն կանոնադրության դրույթները:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԸ

5.1 Կազմակերպությունը հանդիսանում է սեփականատեր՝

- Կազմակերպության հիմնադրի կողմից (հիմնադրման ժամանակ և հետագայում) սեփականության իրավունքով հանձնված գույքի,
- Կազմակերպության գործունեության հետևանքով արտադրած արտադրանքի և ձեռք բերած գույքի,
- Կազմակերպության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց,
- Կազմակերպության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը կազմակերպության սեփականության պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում է միայն օրենքով:

5.2 Կազմակերպության հիմնադիրը Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ:

5.3 Կազմակերպության հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

5.4 Կազմակերպության գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

5.5 Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար սահմանված կարգով ու չափով հարկերը, և պարտադիր այլ վճարները կատարելուց հետո մնացած, սահմանված կարգով առաջացած մաքուր շահույթը Կազմակերպությունն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների (կազմակերպության տեխնիկական հագեցվածության բարելավում, այդ թվում՝ հիմնական միջոցների ձեռքբերման ճանապարհով, Կազմակերպության աշխատանքային գործունեությունը ապահովող գույքի և նյութերի ձեռքբերում, գրականության ձեռքբերում, բրոշյուրների, գրքույկների, տեղեկագրերի հրապարակման կազմակերպում, պարգևատրումների, հավելավճարների և խրախուսման այլ միջոցներով Կազմակերպության աշխատակիցների սոցիալական պաշտպանվածության բարձրացում, աշխատակիցների որակավորման բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպում կամ մասնակցություն կազմակերպված դասընթացներին և այլն) իրականացման համար:

Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

## 6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6.1 Կազմակերպության կառավարման մարմիններն են Կազմակերպության հիմնադիրը և տնօրենը:

6.2 Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը Կազմակերպության հիմնադիրն է, որն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը և որն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելուիրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Կազմակերպության հիմնադիրն ապահովում է Կազմակերպության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է սույն կանոնադրությամբ սահմանված գործունեության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման իրականացման համար:

6.3Կազմակերպության հիմնադրի իրավասությանն են պատկանում.

1) Կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Կազմակերպության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
2) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմի հաստատումը,
3) Կազմակերպությանն ամրացվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կազմի հաստատումը,
4) Կազմակերպության վերակազմակերպումը
5) Կազմակերպության լուծարումը
6) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների (լուծարման ամփոփիչ, լուծարման միջանկյալ և լուծարման հաշվեկշիռներ) հաստատումը,
7) Կազմակերպությունների հիմնադրումը,
8) Կազմակերպություններում մասնակցությունների մասին որոշումների ընդունումը,
9) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը, Կազակերպության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
10) Կազմակերպության գործունեության վերահսկողության իրականացումը,
11) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ Կազմակերպության կողմից իրականացվող գործունեության տեսակների և ծրագրերի սահմանումը,
12) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

13) Աուդիտի իրականացման որոշումն ընդունելը,
14) Կազմակերպության տարեկան ծախսերի, այդ թվում՝ արտաբյուջետային եկամուտների և ծախսերի նախահաշվի, հաստիքացուցակների հաստատումը,
15) Կազմակերպության տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը,
16) Կազմակերպության շահույթի ու վնասների օգտագործման կարգի մասին որոշման ընդունումը,
17) Կազմակերպության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը,
18) Կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ (որոնց արժեքը, գործարքին փոխկապակցված այլ գործարքների հետ միասին, գերազանցում է այդ գործարքների կատարելու մասին որոշման ընդունման օրվանը նախորդող եռամսյակի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների մեծության ¼-ը) կատարելուն համաձայնություն տալը,
19) Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
20) Կազմակերպության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (Կազմակերպության ներքին փաստաթղթեր) հաստատումը,
21) Ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը,Կազմակերպության Հիմնադիրն իրավունք ունի որոշումներ ընդունել նաև Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված ցանկացած այլ հարցի շուրջ:

6.4 Կազմակերպության ընթացիկ, արտադրատնտեսական, ֆինանսական և այլ գործունեության ղեկավարումը իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է Հիմնադիրը, երեք տարի ժամկետով: Մրցութային կարգով կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող, Հայաստանի Հանրապետության գործունակ ցանկացած քաղաքացի, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի: Կազմակերպության և Կազմակերպության տնօրենի միջև աշխատանքային պայմանագիրը հիմնադրի անունից ստորագրվում է համայնքի ղեկավարի կողմից: Պայմանագրում սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, փոխհարաբերությունները Հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման հիմքերը (այդ թվում՝ Օրենքով նախատեսված բոլոր հիմքերը), այլ դրույթներ, որոնք կողմերը կգտնեն անհրաժեշտ:

Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Կազմակերպության Հիմնադրի իրավասության վերաբերվող հարցերի: Տնօրենը օրենքով, Հիմնադրի որոշումներով, աշխատանքային պայմանագրով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության, աշխատանքային պայմանագրի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը, Հիմնադրին, պետությանը պատճառված վնասի համար, ընդ որում տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու:

Հիմնադրի անունից հանդես եկող պաշտոնատար անձը (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարը) պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել վերը նշված վնասի փոխհատուցման հարցը, հակառակ դեպքում՝ նա կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

Տնօրենի բացակայության դեպքում, Հիմնադրի գրավոր որոշման համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

6.5 Կազմակերպության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Կազմակերպության:

Կազմակերպության տնօրենը իր իրավասության սահմաններում՝

1) Առանց լիազորագրի գործում է կազմակերպությունների անունից, ներկայացնում է նրա շահերը պետության, նրա մարմինների, այլ կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում,
2) Տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,
3) Կնքում է պայմանագիր, այդ թվում է՝ աշխատանքային,
4) Կազմակերպում է կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը,
5) Տալիս է լիազորագիր, այդ թվում՝ վերալիցենզավորման իրավունքով լիազորագիր,
6) Բանկում բացվում է հաշվարկային և այլ հաշիվներ,
7) Սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային տարաբաժանումների իրավասությունները,

8) Հաստատում է կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունը, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին, տալիս է համապատասխան լիազորագրեր.
9) Ներկայացնում է հաստիքացուցակը հիմնադրի հաստատմանը,
10) Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վեահսկում դրանց կատարումը,
11) Կատարում է աշխատանքի բաշխում իր աշխատողների միջև,
12) Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին,
13) Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
14) Սույն կանոնադրության 6.3 կետի 1,4, 8, 11, 14, 16, 17, 19, 21 ենթակետերով սահմանված հարցերի մասին առաջարկություններ է ներկայացնում Հիմնադրին,
15) Իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված կամ հիմնադրի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ:

6.6 Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հիմնադրի կողմից լիազորված անձը, օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար Հիմնադիրն իրավունք ունի ամեն տարի ներգրավել Կազմակերպության, Կազմակերպության տնօրենի, գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչի՝ աուդիտորի (արտաքին աուդիտ):

## 7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Կազմակերպությունը չունի ճյուղեր և ներկայացուցչություններ:

## 8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1 Կազմակերպությունը, նրա Հիմնադիրի որոշմամբ, կարող է կամովի վերակազմակերպվել կամ լուծարվել Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Կազմակերպությունը կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Եթե լուծարվող Կազմակերպության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հիմքով:

8.2 Կազմակերպությունն իրավունք ունի վերակազմավորվել հարյուր տոկոս համայնքային (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք) մասնակցությամբ կամ հիմնադրամի:

8.3 Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի բյուջե:

8.4 Կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը դադարած՝ այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2025 թվականի N 89-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԸ ԳՏՆՎՈՂ 36.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹԻՎ 14 ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՄԵՐ ԱՊԱԳԱՆ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Վարդաձոր բնակավայրի վարչական ղեկավարի 2025 թվականի մայիսի 19-ի N41 գրությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդաձոր բնակավայրի Ալաշկերտի փողոց, թիվ 16 հասցեում գտնվող մշակույթի տան 2-րդ հարկի 36.0 քմ մակերեսով թիվ 14 տարածքը (համաձայն սեփականության իրավունքի գրանցման վկայականում շենքի հատակագծի) անհատույց օգտագործման իրավունքով տասը տարի ժամկետով տրամադրել «Մեր ապագան» կրթամշակութային իրավունքով տասը տարի ժամկետով տրամադրել «Մեր ապագան» կրթամշակութային բարեգործական հիմնադրամին՝ «Ռուսական կենտրոն» ձևավորելու և կրթական ծրագրերը մեկնարկելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -18 Դեմ -1 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ

2025 թ. մայիսի 30

ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

30 մայիսի 2025 թվականի  N 90-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հինգերորդ հերթական նիստի օրը սահմանել 2025 թվականի հունիսի 25-ին, ժամը 15:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎԵՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025 թ. մայիսի 30
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2025 թվականի N 91-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 16/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-045-0010-0229 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.1466 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 29-ի թիվ 677-Ա որոշումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 1-ին փողոց, թիվ 16/2 հասցեում գտնվող 05-045-0010-0229 կադաստրային ծածկագրով 0.1466 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման) վերադարձնել Հայաստանի Հանրապետությանը (Հայաստանի Հանրապետության անունից հանդես է գալիս ՀՀ ՏԿԵ նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -2

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՄԱՐԿԱՐՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՅԱՆ ՄԱՐԻՆԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵԽԱԿ

ԲԱՐՈՅԱՆ ՀԱԿՈԲ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՂԱՇ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ**

2025 թ. մայիսի 30
ք. Մարտունի